

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ  
ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

### Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Դավիթ Հարությունյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

Նախագծի ընդունման դեպքում՝

1) անհրաժեշտություն կառաջանա համապատասխան փոփոխություններ կատարել «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում, մասնավորապես, վերստուգում իրականացնելու, ստուգումն իրականացնող անձանց գործողությունները բողոքարկելու մասերով, ինչպես նաև ստուգման իրականացման ժամկետների և ստուգումից առաջ տնտեսավարող սուբյեկտներին տեղյակ պահելու վերաբերյալ դրույթների մասով: Միաժամանակ, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1.1-ին կետի համաձայն «Եթե անձի իրավունքի խախտումը նրա համար առաջացրել է վնաս, և խախտումը կապված է սույն օրենսգրքով սահմանված կարգով գործարքների կնքման կամ դրանց կատարման ընթացքում կոռուպցիոն գործո-

դության հետ, ապա վնասի հատուցման պահանջներով հայցային վաղեմության ժամկետը սահմանափակվում է **10** տարով՝ այն գործողության կատարման օրվանից հաշված, որն առաջացրել է վնաս».

2) մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան իրականացված ստուգումների և դրանց արդյունքում կազմված ակտերի իրավաչափությունը վերադասության կամ դատական կարգով վիճարկելիս՝ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կանոնակարգումները հիմք ընդունելու դեպքում՝ իրականացված ստուգումների արդյունքները կկորցնեն իրենց ապացուցողական նշանակությունը, ինչը կարող է էական ազդեցություն ունենալ քրեական գործերի քննության ժամկետների և այդ արդյունքների հիման վրա ընդունված որոշումների վրա:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ ներկայացված տեսքով օրենքի նախագիծն ընդունելի չէ, և այն լրամշակման կարիք ունի:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Գևորգ Դանիելյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին**

**ՀՈՂՎԱԾ 1.** «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թվականի մայիսի 17-ի ՀՕ-60 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 6-րդ մասից հանել «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան իրականացվող ստուգումների նշանակման եւ անցկացման» բառերը:

**ՀՈՂՎԱԾ 2.** Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր պարբերությամբ հետեւյալ բովանդակությամբ. «Ստուգման ժամկետը երկարաձգող կամ կասեցնող ակտը վարչական ակտ է, որն ուժի մեջ է մտնում ստուգվող սուբյեկտին հանձնելու օրվանը հաջորդող օրվանից»:

**ՀՈՂՎԱԾ 3.** Մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան իրականացված ստուգումների եւ դրանց արդյունքում կազմված ակտերի իրավաչափությունը վերադասության կամ դատական կարգով վիճարկելիս, հիմք են ընդունվում «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կանոնակարգումները:

**ՀՈՂՎԱԾ 4.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆԳՎԱԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ**

Ներկայացված օրենսդրական նախաձեռնությունը նպատակ է հետապնդում կանխելու Հայաստանի Հանրապետությունում՝ վարչական մարմինների ձեւավորած հակասահմանադրական գործելաոճը եւ դատական խեղաթյուր նախադեպերը, որոնց օրենքների մեկնաբանմամբ իրավունքի զարգացումը տարել են այն ուղղությամբ, որի հետեւանքով ոչ միայն խեղաթյուրվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության հիմնարար սկզբունքներն ու կանոնակարգումները, այլեւ կոպտագույն կերպով ռոտահարվում են քաղաքացիների եւ իրավաբանական անձանց իրավունքներն ու հիմնարար ազատությունները, ձեւախեղելով իրավական պետության բուն գաղափարը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության բարեփոխումները նպատակ էին հետապնդում նպաստելու անձանց իրավունքների պաշտպանությանը, արդյունքում այդ նորմերի անհասկանալի մեկնաբանումը դատական նախադեպերի միջոցով, ցավոք նսե-

մացրեց ամբողջ սահմանադրական բարեփոխումների իմաստն ու բովանդակությունը: Նման դատական նախադեպերով ստվերվում է նաև դատախիրավական բարեփոխումների ամբողջ գաղափարը, երբ նույնիսկ այլակերպվում է օրենքի բուն գաղափարն ու նշանակությունը:

Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության **83.5**-րդ հոդվածի **3**-րդ կետի համաձայն. **Բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում` «3) իրավաբանական անձանց, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող ֆիզիկական անձանց գործունեության նկատմամբ հսկողությունն ու վերահսկողությունն (այդ թվում` ստուգում, ուսումնասիրություն, տեսչական ստուգում) իրականացնելու դեպքերը, պայմանները եւ կարգը»:**

Նշված իրավանորմի պահանջը միանշանակ է ու հստակ, ոչ մի տարակարծություն կամ մեկնաբանություն չի կարող առաջացնել: Այսինքն ցանկացած տեսակի ստուգման դեպքը, պայմանը ու կարգը պետք է սահմանվի միայն ու միայն օրենքով: Մտուգման կարգը իր մեջ ներառում է ոչ միայն ստուգման իրականացման մեխանիզմը, այլև ստուգվողի իրավունքները, պարտականությունները եւ այլն:

Հայաստանի Հանրապետությունում գործում է ստուգումների մասին միայն մեկ օրենք, դա «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՀՀ օրենքն է: Նշված օրենքի **1**-ին հոդվածի **6**-րդ մասի համաձայն այդ օրենքի գործողությունը չի տարածվում Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան իրականացվող ստուգումների նշանակման եւ անցկացման վրա:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի **55**-րդ հոդվածի **4**-րդ մասի **5**-րդ կետի համաձայն. «Քննիչը, մասնավորապես, լիազորված է`...5) պահանջել կատարելու վերստուգումներ, գույքագրումներ, այլ ստուգողական գործողություններ.»: Նշված իրավանորմը սահմանում է մեկ լիազորություն, քննիչը կարող է որոշում կայացնել վերստուգումներ, գույքագրումներ, այլ ստուգողական գործողություններ կատարելու մասին: Նշվածից բացի քրեական դատավարության օրենսգիրքը որեւէ այլ բան չի սահմանում: Այսինքն, այդ օրենսգիրքը չի սահմանում եւ չէր էլ կարող սահմանել, թե այդ ստուգումը ինչ կարգով պետք է ընթանա, ինչ ժամկետներում, այդ ստուգման ժամանակ ստուգվողը իրավունքներ ունի, թե չունի, ստուգման ժամանակ կատարվող ապօրինի գործողություններից կարող է պաշտպանվել թե ոչ եւ ինչ եղանակներով: Այսինքն, նշված բազմաթիվ հարցերը, որոնք ուղղակիորեն առնչվում են մարդու իրավունքների հետ քրեական դատավարության տիրույթից դուրս են եւ դա ճիշտ է, քանի որ հնարավոր են դեպքեր, երբ ստուգվող անձը նույնիսկ քրեական դատավարության կարգով կարող է տվյալ վարույթի մասնակից չհանդիսանալ:

Մա նշանակում է, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության **83.5**-րդ հոդվածի **3**-րդ կետի իմպերատիվ պահանջը, հաշվի առնելով այդ ստուգումների կարգը, եւս պետք է կարգավորվի եւ այն էլ ոչ թե կատավարության որոշումներով, այլ միայն ու միայն օրենքով: Հակառակ դեպքում, այդ ստուգումները կլինեն ապօրինի:

Որքան էլ տարօրինակ է, այսօր ձեւավորված մոտեցումներին համապատասխան, այդ կարգը իբր սահմանվում է քրեական դատավարության օրենսգրքով, որի արդյունքում այդ ստուգումների իրավաչափության վիճարկումը չի դառնում ինքնուրույն վեճի առարկա, հետեւաբար ստուգվող սուբյեկտը զրկվում է ստուգման ժամանակ թույլ տրված ապօրինությունների դեմ իրավական պաշտպանության բոլոր մեխանիզմներից:

Դատական նախադեպերի վրա հիմնված արատավոր պրակտիկան կանխելու եւ սահմանադրաիրավական նորմերը լիարժեք կյանքի կոչելու է ուղղված ներկայացված նախագծի 1-ին հոդվածը:

Ներկայացված նախագծի 2-րդ հոդվածը նպատակ է հետապնդում հստակեցնել օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասը, որի հստակեցման անհրաժեշտությունը եւս պայմանավորված է ձեւավորված դատական նախադեպով, որն այսօր սկսվել է կիրառվել դատական պրակտիկայում, եւ որի արդյունքում ստուգվողի վիճակը անհասկանալի վատթարացվում է, իսկ ստուգողների համար ստեղծվում է կամայականության լայն հնարավորություններ:

Այսպես, «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ. «Ստուգման ժամկետը չպետք է գերազանցի ստուգում իրականացնելու մասին համապատասխան պետական մարմնի ղեկավարի (փոխարինող պաշտոնատար անձի) հրամանում կամ հանձնարարագրում նշված ժամկետը: Անհրաժեշտության դեպքում ստուգումն իրականացնող պաշտոնատար անձի գրավոր հիմնավորմամբ՝ համապատասխան պետական մարմնի ղեկավարի հրամանով կամ հանձնարարագրով, սույն հոդվածի 1-ին կետով սահմանված ժամկետը կարող է երկարաձգվել մինչեւ տասն անընդմեջ աշխատանքային օր...»:

«Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի պահանջները հիմք ընդունելով՝ միանշանակ է դառնում, որ ստուգում իրականացնելու մասին համապատասխան պետական մարմնի ղեկավարի (փոխարինող պաշտոնատար անձի) հրամանը կամ հանձնարարագիրը իրենից ներկայացնում է վարչական ակտ, իսկ իրավունքի տեսության տարրական պահանջների հաշվառմամբ ակնհայտ է, որ վարչական ակտում փոփոխություն կատարող ակտը եւս պետք է լինի վարչական ակտ: Դատական պրակտիկայում ձեւավորված նախադեպի համաձայն, անհասկանալի հիմնավորումներով պայմանավորված տվյալ վարչական ակտի ժամկետին վերաբերող մասը փոփոխող ակտը ճանաչվել է անհատական ակտ: Սակայն, նույնիսկ այդ պայմաններում, մեղմ ասած, անընկալելի է այն պրակտիկայի ձեւավորումը, որը բխել է Վճռաբեկ դատարանի 26.12.2008թ. ՎԴ /1604/05/08 որոշումից, կամ ավելի ճիշտ այդ որոշմամբ տրված օրենքի մեկնաբանումից:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 60 հոդվածի 1 մասի համաձայն.

«Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի, Հայաստանի Հանրապետության վարչապետի, գերատեսչական, տեղական ինքնակառավարման մարմինների, պետական այլ մարմինների, պետական կամ համայնքային հիմնարկների, իրավաբանական անձանց անհատական իրավական ակտերն ուժի մեջ են մտնում դրանց ընդունմանը հաջորդող օրվանից, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենքով, այլ օրենքներով կամ այդ անհատական իրավական ակտով: Հայաստանի Հանրապետության կառավարության անհատական իրավական ակտերն ուժի մեջ են մտնում Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից ստորագրվելու օրվան, իսկ Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից վավերացման ենթակա՝ Հայաստանի Հանրապետության կառավարության անհատական իրավական ակտերն ուժի մեջ են մտնում դրանց վավերացմանը հաջորդող օրվանից, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենքով, այլ օրենքներով կամ այդ անհատական իրավական ակտով»:

Վճռաբեկ դատարանի 26.12.2008թ. ՎԴ /1604/05/08 որոշմամբ, վկայակոչելով այս նույն հոդվածը, ամրագրել է նախադեպ, ըստ որի. «...Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստուգման ընթացքը երկարացնելու մասին հրամանը, հանդիսանալով անհատական

իրավական ակտ, վարքագծի կանոններ է սահմանում դրանում անհատապես նշված հարկային տեսուչների համար եւ ուժի մեջ է մտնում նրանց հանձնելու պահից»:

Այսինքն ստացվում է, որ ինչ որ ընկերության մոտ կատարվում է ստուգում, որի ժամկետը լրանում է, սակայն հարկային տեսուչները գալիս են ու բանավոր ասում, որ ստուգումը շարունակում են: Ստուգվող ընկերությանը որեւէ բացատրություն կամ որեւէ փաստաթուղթ ներկայացնելու անհրաժեշտություն չունեն ու դա նշված նախադեպը համարում է օրինական, եթե ասենք մի տաս օր հետո կներկայացվի մի հետին թվով հրաման, որով ստուգման ժամկետը երկարաձգված կլինի: Այսինքն, տեսուչը գիտի, որ ժամկետը երկարաձգվել է, ընկերությանը տեղեկացնելու անհրաժեշտություն չկա: Նման տրամաբանությամբ ստացվում է, որ մարդու սանկցիայի ժամկետը երկարաձգելու մասին բանտի պետին տեղեկացնելը լրիվ բավարար է, իսկ կալանավորվածին կարող են նաեւ չտեղեկացնել: Այսինքն, ստացվում է, որ ստուգման ժամկետը երկարաձգող ակտին ստուգվողը տեղյակ չի, բայց պարտավոր է կատարել ստուգման ժամանակահատվածի համար իր համար սահմանված բոլոր պարտականությունները: Ստուգումների մասին ՀՀ օրենքի տրամաբանությունը ոչ միայն խեղաթյուրվում է, այլեւ այն ամբողջ գաղափարախոսությունը, որը դրված էր այդ օրենքի հիմքում խարխլվում է, օրենքը այս մասով իմաստագուրկ է դառում: Ավելին, սա թույլ է տալիս, որ ստուգումը ավարտվելու դեպքում այն շարունակվի, իսկ հետագայում միայն ներկայացվի ժամկետը երկարաձգելու մասին հրաման, որից նույնիսկ պարզ չի լինի, թե երբ է այդ հրամանը ստեղծվել` հետին թվով թե` ոչ: